ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«_____» 2026թ. **N ------ -Ն**

ՈՐՈՇՈՒՄ

ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՎՃԱՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՇՎԱՐԿՎԱԾ ՏՈՒՅԺԵՐԻ ՎՃԱՐՄԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 431-րդ հոդվածով, «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 17-րդ, 33-րդ կետերով և 70-րդ հոդվածով, «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» օրենքի 6-րդ հոդվածով.

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան քաղաքի վարչական տարածքում բնակելի նպատակային նշանակության շենքերում և (կամ) շինություններում բնակվող յուրաքանչյուր բնակչի հաշվով մինչև 2018 թվականը ներառյալ հաշվարկված աղբահանության վճարը «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» օրենքով սահմանված ժամկետներում չվճարած ֆիզիկական անձանց (ներառյալ՝ անհատ ձեռնարկատերերին և արտոնագրային վճար վճարողներին) ազատել սահմանված ժամկետներում աղբահանության վճարը չվճարելու հետևանքով հաշվարկված և չվճարված տույժերի վճարման պարտականությունից, եթե աղբահանության վճար վճարողը մինչև 2026 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ Երևանի քաղաքապետին ներկայացրել է դիմում՝ հաշվարկված տույժերի վճարման պարտականությունից ազատելու վերաբերյալ, և դիմումը ներկայացնելու օրվա դրությամբ աղբահանության վճար վճարողը չունի մինչև 2018 թվականը ներառյալ հաշվարկված աղբահանության վճարի (ապառքի) գծով պարտավորություններ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՎՃԱՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՇՎԱՐԿՎԱԾ ՏՈՒՅԺԵՐԻ ՎՃԱՐՄԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

Ընթացիկ իրավիճակը, իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը, առկա խնդիրների առաջարկվող լուծումները.

Նախագծով առաջարկվում է Երևան քաղաքի վարչական տարածքում բնակելի նպատակային նշանակության շենքերում և (կամ) շինություններում բնակվող յուրաքանչյուր բնակչի հաշվով մինչև 2018 թվականը ներառյալ հաշվարկված աղբահանության վճարը «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» օրենքով սահմանված ժամկետներում չվճարած ֆիզիկական անձանց (ներառյալ՝ անհատ ձեռնարկատերերին և արտոնագրային վճար վճարողներին) ազատել սահմանված ժամկետներում աղբահանության վճարը չվճարելու հետևանքով հաշվարկված և չվճարված տույժերի վճարման պարտականությունից, եթե աղբահանության վճար վճարողը մինչև 2026 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ Երևանի քաղաքապետին ներկայացրել է դիմում՝ հաշվարկված տույժերի վճարման պարտականությունից ազատելու վերաբերյալ, և դիմումը ներկայացնելու օրվա դրությամբ աղբահանության վճար վճարողը չունի մինչև 2018 թվականը ներառյալ հաշվարկված աղբահանության վճարի (ապառքի) գծով պարտավորություններ:

Երևան քաղաքի ավագանու «Աղբահանության վճարի նկատմամբ հաշվարկված տույժերի վճարման պարտականությունից ազատելու մասին» որոշման նախագծի ընդունումը կնպաստի դիմում ներկայացրած և աղբահանության հաշվարկված վճարի (ապառքի) մասով վճարումներ կատարած ֆիզիկական անձանց ֆինանսական ծանրաբեռնվածության թեթևացմանը:

Հաշվի առնելով աղբահանության վճարի մասով մինչև 2018 թվականը հաշվարկված պարտավորությունների գանձման ցածր ցուցանիշը, նաև 2025 թվականից անցումն աղբահանության վճարի հաշվարկման նոր համակարգին՝ աղբահանության վճարի պլանային առաջադրանքի կազմման համար հիմք է ընդունվել 2025 թվականի փաստացի եկամուտների վերլուծությունը: Հետևաբար, աղբահանության վճարի տույժերի մասով արտոնության տրամադրումը չի հանգեցնի 2026 թվականի բյուջեի եկամուտների նվազեցմանը, միաժամանակ կարող է ապահովել լրացուցիչ եկամուտներ ապառքների վճարումից:

Ելնելով վերոգրյալից, Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում «Աղբահանության վճարի նկատմամբ հաշվարկված տույժերի վճարման պարտականությունից ազատելու մասին» որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ